

EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

(Գանգատ թիվ 35688/11)

ՎՃԻՌ

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ

24 նոյեմբերի 2016թ.

Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE

Մանուչարյանն ընդդեմ Հայաստանի գործով,

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), հանդես գալով Պալատի հետեւյալ կազմով՝

Միրյանա Լազարովա Տրայկովսկա [Mirjana Lazarova Trajkovska]՝ *Նախագահ*,

Քրիստինա Պարդալոս [Kristina Pardalos],

Լինոս-Ալեքսանդր Սիցիլիանոս [Linos-Alexandre Sicilianos],

Ալեշ Պեյխալ [Aleš Pejchal],

Ռոբերտ Սպանո [Robert Spano],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Թիմ Այքը [Tim Eicke]՝ *դատավորներ*,

եւ Աբել Կամպոս [Abel Campos]՝ *Բաժանմունքի քարտուղար*,

2016 թվականի նոյեմբերի 3-ին անցկացնելով դռնփակ խորհրդակցություն,

կայացրեց հետեւյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ հոդվածի համաձայն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի պրն Սպարտակ Մանուչարյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության՝ 2011 թվականի մայիսի 31-ին Դատարան ներկայացված գանգատի (թիվ 35688/11) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել է Վանաձորում գործող իրավաբան պրն Տ. Մատինյանը: Հայաստանի Հանրապետության Կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական

դատարանում Հայաստանի Հանրապետության Կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Գ. Կոստանյանը:

3. Դիմումատուն մասնավորապես պնդել է, որ խախտվել է իր՝ արդար դատաքննության իրավունքը, քանի որ իր դատապարտումը հիմնված է եղել վկայի չստուգված ցուցմունքի վրա:

4. 2013 թվականի հուլիսի 11-ին դիմումատուի՝ իր դեմ ցուցմունք տված վկաներին կանչելու եւ հարցաքննելու հնարավորություն չունենալու վերաբերյալ բողոքն ուղարկվել է Կառավարություն, իսկ գանգատը մնացած մասով հայտարարվել է անընդունելի՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 54-րդ կանոնի 3-րդ կետի:

ՓԱՍՏԵՐԸ

I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1976 թվականին եւ այժմ պատիժը կրում է «Նուբարաշեն» քրեակատարողական հիմնարկում:

6. 2009 թվականի հուլիսի 1-ին հարուցվել է քրեական գործ Կ. Ս.-ի սպանության փաստի առթիվ, ում վրա այդ օրը կրակ են արձակել եւ սպանել ժամը 01:30-ին Ալավերդի քաղաքում:

7. Այդ օրն ավելի ուշ դիմումատուն մեղայականով ներկայացել է ոստիկանություն, հանձնել իր զենքը եւ խոստովանել սպանությունը կատարած լինելու հանգամանքը:

8. Նույն օրը դիմումատուին մեղադրանք է առաջադրվել սպանություն կատարելու եւ ապօրինի կերպով հրազեն պահելու մեջ:

9. Նույն օրը ոստիկանությունը հարցաքննել է Կ. Ս.-ի ընկերուհի Ք. Մ.-ին, ով ներկա է եղել սպանության կատարման վայրում: Նա հայտնել է, որ

դիմումատուն՝ իր հարեւանը, բղավելով եւ հայհոյելով, սկսել է կրակ արձակել Կ. Ս.-ի ավտոմեքենայի վրա այն բանից կարճ ժամանակ անց, երբ ինքը դուրս է եկել ավտոմեքենայից:

10. 2009 թվականի հուլիսի 3-ին դիմումատուն հարցաքննվել է: Նա առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել եւ հրաժարվել է ցուցմունք տալուց:

11. Հարցաքննության ժամանակ Կ. Ս.-ի քույր Ս. Ս.-ն հայտնել է, որ տեղյակ է եղել իր եղբոր եւ դիմումատուի ընկերոջ միջեւ եղած որոշ խնդիրների մասին: Նա հայտնել է, որ դիմումատուն մեկ անգամ զանգահարել է իրեն եւ հետաքրքրվել Կ. Ս.-ի գտնվելու վայրի մասին: Ինքն այնուհետեւ այդ մասին տեղեկացրել է Կ. Ս.-ին, եւ վերջինս մտահոգվել է:

12. Ք. Մ.-ի ծնողները՝ Ս. Մ.-ն եւ Ա. Մ.-ն, իրենց հարցաքննության ժամանակ հայտնել են, որ սպանության օրը լսել են կրակոցի ձայներ, որից կարճ ժամանակ անց Ք. Մ.-ն, արցունքն աչքերին, վազելով մտել է իրենց տուն եւ հայտնել, որ դիմումատուն իր աչքի առջեւ սպանել է Կ. Ս.-ին:

13. 2010 թվականի հունվարի 14-ին սպանվել է դիմումատուի եղբայր Վ. Մ.-ն:

14. 2010 թվականի մարտի 9-ին կայացած լրացուցիչ հարցաքննության ժամանակ դիմումատուն հայտնել է, որ խոստովանել է սպանությունը կատարելու հանգամանքը՝ եղբոր արարքը քողարկելու համար՝ պատճառաբանելով, որ եղբայրն ունի նորածին երեխա եւ հոգ է տանում իրենց ծնողների մասին: Դիմումատուն հայտնել է, որ այլեւս առկա չի եղել Վ. Մ.-ի արարքը քողարկելու անհրաժեշտություն, քանի որ վերջինս արդեն մահացել է: Դիմումատուի այլուրեքությունը եղել է այն, որ սպանության օրը նա այցելել է իր հոր ընկերոջը՝ Վ. Ջ.-ին, մոտավորապես երեկոյան ժամը 22:30-ին եւ մնացել նրա տանը մինչեւ ժամը 02:30-ը:

15. 2010 թվականի մարտի 12-ին հարցաքննվել է Վ. Ջ.-ն, որը հերքել է, որ դիմումատուն իր տանն է եղել մինչեւ այդ ուշ ժամը: Նա մասնավորապես հայտնել է,

որ դիմումատուն իսկապես եկել է իր տուն մոտավորապես երեկոյան ժամը 22:00-ին, սակայն մնացել է մոտ մեկ կամ մեկ ու կես ժամ: Մոտավորապես ժամը 23:30-ին Վ. Մ.-ն եկել է եւ դիմումատուին ասել, որ իրենք պետք է գնան եւ տեսնեն ինչ-որ մեկին, որից հետո նրանք հեռացել են:

16. Դիմումատուի եւ Վ. Ջ.-ի առերես հարցաքննության ժամանակ վերջինս հաստատել է իր նախկին ցուցմունքն այն մասին, որ դիմումատուն իր տուն է եկել մոտավորապես ժամը 22:00-ին եւ այնտեղ մնացել է ոչ ավելի, քան երկու ժամ: Դիմումատուն որեւէ վկայություն չի տվել:

17. 2010 թվականի ապրիլի 27-ին հաստատվել է մեղադրական եզրակացությունը, եւ գործը դատաքննության նպատակով ուղարկվել է Լոռու մարզի [ընդհանուր իրավասության առաջին ատյանի] դատարան: Մեղադրանքի կողմը հիմնվել է հետեւյալ ապացույցների վրա. Ս. Ս.-ի, Ք. Մ.-ի, Ս. Մ.-ի, Ա. Մ.-ի եւ Վ. Ջ.-ի ցուցմունքներ, դիմումատուի եւ Վ. Ջ.-ի առերես հարցաքննության արձանագրություն, դատաբժշկական փորձաքննության արդյունքներ, այդ թվում՝ դատաքիմիական փորձաքննություն, որով հայտնաբերվել են կրակոցի հետքեր դիմումատուի՝ սպանության օրը կրած հագուստի վրա, ինչպես նաեւ տարբեր քննչական գործողությունների արձանագրություններ:

18. 2010 թվականի մայիսի 13-ի որոշմամբ մարզային դատարանը դիմումատուի գործով առաջին լսումը նշանակել է 2010 թվականի մայիսի 21-ին:

19. 2010 թվականի մայիսի 14-ի գրությամբ մարզային դատարանը Ք. Մ.-ին ուղարկել է 2010 թվականի մայիսի 21-ին կայանալիք լսմանը ներկայանալու ծանուցագիր: Ծանուցագիրը վերադարձվել է մարզային դատարան:

20. Մարզային դատարանը Ք. Մ.-ին, Ս. Մ.-ին եւ Վ. Ջ.-ին ուղարկել է 2010 թվականի հունիսի 17-ի հետաձգված լսմանը ներկայանալու ծանուցագիր:

21. 2010 թվականի հունիսի 17-ին մարզային դատարանն անցկացրել է լսում, որին պատշաճ կերպով ծանուցված Ք. Մ.-ն, Ս. Մ.-ն եւ Վ. Ջ.-ն չեն ներկայացել: Մարզային դատարանը որոշում է կայացրել վկաների՝

2010 թվականի հունիսի 29-ի հետաձգված լսմանը հարկադրաբար ներկայանալու վերաբերյալ: Որոշման կատարումը հանձնարարվել է ոստիկանությանը:

22. 2010 թվականի հունիսի 29-ին ոստիկանությունը գրություն է ուղարկել մարզային դատարան՝ *inter alia* (ի թիվս այլնի) տեղեկացնելով, որ Ք. Մ.-ն բացակայում է բնակության վայրից:

23. Նույն օրը մարզային դատարանն անցկացրել է լսում՝ հայտնելով, որ քանի որ վկաների, այդ թվում՝ Ք. Մ.-ի հարկադրաբար ներկայանալու վերաբերյալ իր որոշումը ի կատար չի ածվել, որոշում է կայացրել նրանց կարգադրել ներկայանալ 2010 թվականի հուլիսի 22-ին կայանալիք հաջորդ լսմանը:

24. Այնուհետեւ մարզային դատարանն անցկացրել է առնվազն երեք լրացուցիչ լսումներ 2010 թվականի սեպտեմբերի 7-ին, հոկտեմբերի 21-ին եւ 22-ին՝ յուրաքանչյուր անգամ որոշում կայացնելով կարգադրել քննությունից բացակայող վկաներին, այդ թվում՝ Ք. Մ.-ին ներկայանալ դատաքննությանը: 2010 թվականի հոկտեմբերի 20-ին եւ 25-ին ոստիկանությունից ստացված գրությունների համաձայն Ք. Մ.-ն բացակայել է իր բնակության վայրից, երբ ոստիկանությունն այցելել է նրան: 2010 թվականի հոկտեմբերի 20-ի գրության մեջ նշվել է, որ Ս. Մ.-ն հայտնել է ոստիկանությանը, որ իր դուստրը գտնվում է արտասահմանում:

25. Մարզային դատարանն ի վերջո քննել է դիմումատուի գործը Ք. Մ.-ի բացակայությամբ:

26. 2010 թվականի նոյեմբերի 4-ին մարզային դատարանը դիմումատուին մեղավոր է ճանաչել եւ դատապարտել տասներեք տարի ժամկետով ազատազրկման: Նման որոշում կայացնելիս այն մասնավորապես նշել է.

> «Ապացույցների հետազոտում եւ գնահատում՝
>
> 2009 թվականի հուլիսի 1-ին... [դիմումատուն] մեղայականով ներկայացել է... եւ, հանձնելով իր զենքը, հայտնել, որ այդ գիշեր... կրակ է արձակել [Կ. Ս.-ի] ավտոմեքենայի վրա:

Գործի քննության ընթացքում [դիմումատուն] չի ընդունել իրեն առաջադրված մեղադրանքը՝ հայտնելով, որ [Կ. Ս.-ին] սպանել է իր հանգուցյալ եղբայրը [Վ. Մ.-ն]. ինքը գտնվել է... [Վ. Ջ.-ի] տանը...

Դատաքննության ժամանակ [դիմումատուն] իրեն մեղավոր չի ճանաչել...

[Դիմումատուի] կողմից հանցագործության կատարումն ապացուցվել է գործով ձեռք բերված հետեւյալ ապացույցներով՝

Տուժողի իրավահաջորդ, վկա Ս. Ս.-ի ցուցմունքներով ...

... վկա Ք. Մ.-ի մինչդատական ցուցմունքներով ...

... վկաներ Ս. Մ.-ի եւ Ա. Մ.-ի մինչդատական ցուցմունքներով...

... վկա Վ. Ջ.-ի մինչդատական ցուցմունքով, որով նա ամբողջովին հերքել է [դիմումատուի] ցուցմունքն այն մասին, որ սպանության կատարման ժամանակ [դիմումատուն] գտնվել է իր տանը:

[Վ. Ջ.-ն] հաստատել է իր ցուցմունքը... [դիմումատուի] հետ առերես հարցաքննության ժամանակ ...

... դեպքի վայրի զննության արձանագրությունը ...

... դիակի զննության արձանագրությունը ...

... ավտոմեքենայի ... զննության արձանագրությունը ...

... [դիմումատուի] հագուստի առգրավման արձանագրությունը ...

... անձին լուսանկարով ճանաչման ներկայացնելու արձանագրությունը..., որով Ք. Մ.-ն ճանաչել է [դիմումատուին] ...

... մեղայականով ներկայանալու եւ զենքի հանձնման մասին... արձանագրությունը ...

Դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը [Կ. Ս.-ի վնասվածքների մասով] ...

[Դատաբժշկական փորձաքննության մասով այլ ապացույցներ]

Դատաքիմիական փորձաքննության եզրակացությունը ... այն մասին, որ [դիմումատուի] սպանության օրը կրած հագուստի վրա հայտնաբերվել են կրակոցի հետքեր:

[Իրեղեն ապացույցներ]»:

27. Դիմումատուն վերաքննիչ բողոք է բերել՝ պնդելով, *inter alia,* որ դեպքի միակ ականատես վկա Ք. Մ.-ն, ում մինչդատական ցուցմունքը եղել է հանցագործության կատարումն ուղղակիորեն իրեն մեղսագրող միակ ապացույցը, չի հարցաքննվել դատարանում:

28. 2010 թվականի դեկտեմբերի 20-ին Վերաքննիչ քրեական դատարանը գործն ընդունել է վարույթ եւ գործով առաջին լսումը նշանակել 2011 թվականի հունվարի 11-ին:

29. 2011 թվականի հունվարի 11-ին դիմումատուի փաստաբանը դիմել է Վերաքննիչ դատարան՝ պահանջելով, *inter alia,* դատարան կանչել Ք. Մ.-ին: Վերաքննիչ դատարանը բավարարել է տվյալ պահանջը, քանի որ քննությանը Ք. Մ.-ի ներկա գտնվելու հարցը գործի համար նշանակություն է ունեցել, եւ պահանջել է ծանուցել նրան հաջորդ դատական լսմանը ներկայանալու վերաբերյալ:

30. Ք. Մ.-ն չի ներկայացել Վերաքննիչ դատարան: Դիմումատուն հայտնել է, որ ինքն այնուհետեւ դիմել է Ք. Մ.-ի ցուցմունքներն անընդունելի ճանաչելու համար: Ըստ դիմումատուի՝ քննարկումների ընթացքում Վերաքննիչ դատարանը որոշել է անդրադառնալ այդ պահանջին, սակայն հետագայում այդպես չի գործել:

31. 2011 թվականի հունվարի 26-ին Վերաքննիչ դատարանը դիմումատուի դատապարտման մասին ակտը թողել է անփոփոխ՝ հիմք ընդունելով այն նույն ապացույցները, որոնց վրա հիմնվել է մարզային դատարանը: Դատավճռում անդրադարձ չի կատարվել Ք. Մ.-ի՝ դատարան չներկայանալու հարցին:

32. 2011 թվականի փետրվարի 22-ին դիմումատուն վճռաբեկ բողոք է բերել՝ մատնանշելով, *inter alia,* ինչպես մարզային, այնպես էլ Վերաքննիչ դատարանում իր դեմ ցուցմունք տված վկաների հարցաքննության բացակայությունը:

33. 2011 թվականի ապրիլի 12-ին Վճռաբեկ դատարանը հիմքերի բացակայության պատճառով վերադարձրել է վճռաբեկ բողոքը:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

34. Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) 86-րդ հոդվածի (3-րդ եւ 4-րդ կետեր) համաձայն՝ վկան պարտավոր է ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի կանչով: Վկայի կողմից իր պարտականությունները չկատարելն առաջ է բերում օրենքով նախատեսված պատասխանատվություն:

35. ՔԴՕ-ի 153-րդ հոդվածի 2-րդ կետը նախատեսում է, որ վկան կարող է բերման ենթարկվել դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա, իսկ նշանակված ժամկետում կանչով ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին վկան պարտավոր է տեղյակ պահել իրեն կանչած մարմնին:

36. ՔԴՕ-ի 332-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ դատական քննությանը հրավիրված վկաներից որեւէ մեկի չներկայանալու դեպքում դատարանը, լսելով կողմերի կարծիքը, որոշում է կայացնում գործի քննությունը շարունակելու կամ հետաձգելու մասին: Դատաքննությունը կարող է շարունակվել, եթե նշված անձանցից որեւէ մեկի չներկայանալը չի խոչընդոտում գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ հետազոտմանը:

37. ՔԴՕ-ի 342-րդ հոդվածի 1-ին կետում նշվում է, որ հետաքննության, նախաքննության կամ նախորդ դատական քննության ընթացքում վկայի տված ցուցմունքների հրապարակումը դատական քննության ժամանակ թույլատրվում է, երբ վկան դատական նիստից բացակայում է այնպիսի պատճառներով, որոնք բացառում են նրա՝ դատարան ներկայանալու հնարավորությունը, եւ երբ էական հակասություններ կան այդ ցուցմունքների եւ դատարանում վկայի տված ցուցմունքների միջեւ, ինչպես նաեւ ՔԴՕ-ով նախատեսված այլ դեպքերում:

38. ՔԴՕ-ի 426.1 հոդվածի 1-ին կետում նշվում է, որ նոր երեւան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա է միայն օրինական ուժի մեջ մտած դատական ակտը: Այդ հանգամանքների ուժով առաջին ատյանի դատարանի դատական ակտը վերանայում է Վերաքննիչ դատարանը, իսկ Վերաքննիչ

դատարանի եւ Վճռաբեկ դատարանի դատական ակտերը՝ Վճռաբեկ դատարանը (ՔԴՕ-ի 426.1 հոդվածի 2-րդ կետ):

39. ՔԴՕ-ի 426.4 հոդվածը, որը վերաբերում է վարույթի վերաբացմանը, այնքանով, որքանով վերաբերելի է, ունի հետեւյալ բովանդակությունը.

«1. Նոր հանգամանքների հետեւանքով դատական ակտերը վերանայվում են հետեւյալ դեպքերում.

...

2) Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը:

...

3. Նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու համար բողոք կարող է բերվել 3 ամսվա ընթացքում այն պահից, երբ բողոք բերող անձն իմացել է կամ կարող էր իմանալ դրանց ի հայտ գալու մասին:

4. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքում եռամսյա ժամկետի հաշվարկն սկսվում է [համապատասխան] միջազգային դատարանի՝ [դիմումատուի վերաբերյալ գործով] ուժի մեջ մտած վճիռը կամ որոշումն այդ դատարանի կանոնակարգերով սահմանած կարգով այդ դատարան դիմած անձին հանձնելու օրվանից:»:

ԻՐԱՎՈՒՆՔԸ

I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ 3-ՐԴ ԿԵՏԻ «Դ» ԵՆԹԱԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

40. Դիմումատուն բողոք է ներկայացրել այն մասին, որ իր դեմ հարուցված քրեական գործով վարույթի ողջ ընթացքում ինքը զրկված է եղել Ք. Մ.-ին հարցաքննելու հնարավորությունից՝ խախտելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին

կետով եւ 3-րդ կետի «դ» ենթակետով սահմանված իր՝ արդար դատաքննության իրավունքը, որը շարադրված է հետեւյալ բովանդակությամբ՝

«1. Յուրաքանչյուր ոք, ... իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի... դատարանի կողմից... արդարացի ... դատաքննության իրավունք:

... ...

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետեւյալ նվազագույն իրավունքները.

դ) հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, եւ իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու եւ հարցաքննելու միեւնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները:»:

41. Կառավարությունը վիճարկել է այդ փաստարկը:

Ա. Ընդունելիությունը

42. Դատարանը նշում է, որ այս բողոքը, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չէ: Դատարանն այնուհետեւ նշում է, որ այն անընդունելի չէ որեւէ այլ հիմքով: Հետեւաբար, այն պետք է հայտարարվի ընդունելի:

Բ. Ըստ էության քննությունը

1. Կողմերի փաստարկները

43. Դիմումատուն փաստում է, որ իր դատապարտումը որոշիչ կերպով հիմնված է եղել սպանության միակ ականատես վկա Ք. Մ.-ի մինչդատական ցուցմունքի վրա, ում նա հնարավորություն չի ունեցել հարցաքննելու վարույթի որեւէ փուլում: Նախաքննության մարմինը չի փորձել անցկացնել իր եւ Ք. Մ.-ի առերես հարցաքննություն, իսկ դատարանները որեւէ լուրջ փորձ չեն կատարել՝

դատաքննությանը վերջինիս ներկայությունն ապահովելու ուղղությամբ: Վարույթի ոչ մի փուլում դիմումատուն հնարավորություն չի ունեցել վիճարկելու Ք. Մ.-ի ցուցմունքը, որը եղել է մեղավորությունն ուղղակիորեն հաստատող միակ ապացույցը:

44. Կառավարությունը պնդում է, որ, չնայած իրենց բոլոր ջանքերին, համապատասխան մարմինները չեն կարողացել ապահովել Ք. Մ.-ի ներկայությունը դիմումատուի գործով դատաքննությանը: Դատաքննություն անցկացնող դատարանը հիմնվել է Ք. Մ.-ի մինչդատական ցուցմունքի վրա, քանի որ այն հաստատվել է նաեւ այլ ապացույցով, որը դիմամուտուն վիճարկելու հնարավորություն է ունեցել: Դիմումատուն, ով ներկա է եղել դատավարության ողջ ընթացքում, բավականաչափ հնարավորություն է ունեցել ներկայացնելու իր սեփական ապացույցները եւ վիճարկելու այլ վկաների ցուցմունքները:

2. Դատարանի գնահատականը

ա) Ընդհանուր սկզբունքները

45. Դատարանը վերահաստատում է, որ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետով սահմանված երաշխիքները հանդիսանում են այդ դրույթի 1-ին կետով սահմանված արդար լսումների իրավունքի հատուկ հայեցակետերը (տե՛ս *Ալ-Խավաջան եւ Թահերին ընդդեմ Միացյալ Թագավորության* [ՄՊ] [*Al-Khawaja and Tahery v. the United Kingdom* [GC]] գործը, թիվ 26766/05 եւ թիվ 22228/06, § 118, ՄԻԵԴ 2011): Ուստի Դատարանը կքննի դիմումատուի գանգատը՝ միասին վերցրած երկու դրույթների համաձայն (տե՛ս *Վինդիշն ընդդեմ Ավստրիայի* [*Windisch v. Austria*], 1990 թվականի սեպտեմբերի 27, § 23, Շարք Ա թիվ 186):

46. Դատարանն այնուհետեւ վերահաստատում է, որ բոլոր ապացույցները, սովորաբար, պետք է ներկայացվեն հրապարակային լսումների ժամանակ՝

մեղադրյալի ներկայությամբ՝ մրցակցության սկզբունքով փաստարկներ ներկայացնելու համար: Այս սկզբունքից առկա են բացառություններ, սակայն դրանք չպետք է խախտեն պաշտպանության կողմի իրավունքները: Որպես ընդհանուր կանոն, 6-րդ հոդվածի 1-ին կետով եւ 3-րդ կետի «դ» ենթակետով պահանջվում է, որ ամբաստանյալին տրվի վիճարկելու եւ իր դեմ ցուցմունք տվող վկային հարցաքննելու համարժեք եւ պատշաճ հնարավորություն կա՛մ նրա կողմից ցուցմունք տալու ժամանակ, կա՛մ հետագա փուլերում (տե՛ս *Խոդորկովսկին եւ Լեբեդեւն ընդդեմ Ռուսաստանի* [*Khodorkovskiy and Lebedev v. Russia*], թիվ 11082/06 եւ թիվ 13772/05, § 707, 2013 թվականի հուլիսի 25):

47. *Ալ-Խավաջայի եւ Թահերիի* գործով (վերեւում հիշատակված՝ §§ 119-147) Մեծ պալատը հստակեցրել է այն սկզբունքները, որոնք պետք է կիրառվեն, երբ վկան հրապարակային դատաքննությանը չի ներկայանում: Այդ սկզբունքները կարող են ամփոփ ներկայացվել հետեւյալ կերպ՝

i) Դատարանը նախեւառաջ պետք է ուսումնասիրի այն նախնական հարցը, թե արդյոք առկա է հիմնավոր պատճառ՝ քննությունից բացակայող վկայի տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելու համար՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վկաները, որպես ընդհանուր կանոն, պետք է ցուցմունք տան դատաքննության ժամանակ, եւ որ ողջամիտ ջանքեր պետք է ներդրվեն՝ նրանց ներկայությունը երաշխավորելու համար.

ii) չներկայանալու պատճառներից հատկանշական են, օրինակ, ինչպես *Ալ-Խավաջայի եւ Թահերիի* գործում (վերեւում հիշատակված), վկայի բացակայությունը քննությունից մահվան կամ վրեժխնդրության երկյուղի հիմքով: Այնուամենայնիվ, առկա են նաեւ վկայի կողմից դատաքննությանը չներկայանալու այլ իրավաչափ հիմքեր.

iii) եթե վկան չի հարցաքննվել վարույթի որեւէ նախնական փուլում, ապա վկայի ցուցմունքը դատաքննության ժամանակ կենդանի վկայության փոխարեն թույլատրելը պետք է ծառայի որպես ծայրահեղ միջոց.

iv) քննությունից բացակայող վկաների՝ արդեն իսկ տված ցուցմունքը որպես ապացույց ճանաչելը հնարավոր անբարենպաստ հետեւանքներ է առաջացնում ամբաստանյալի համար, որը, ըստ էության, քրեական դատավարության ընթացքում պետք է արդյունավետ հնարավորություն ունենա վիճարկելու իր դեմ ուղղված ապացույցները: Մասնավորապես, նա պետք է հնարավորություն ունենա ստուգելու վկայի ցուցմունքների ճշմարտացիությունը եւ հավաստիությունը՝ վկաներին իր ներկայությամբ բանավոր հարցաքննելու միջոցով՝ վկայի կողմից ցուցմունք տալու ժամանակ կամ վարույթի հետագա փուլերում.

v) «միակ կամ որոշիչ կանոնի» համաձայն՝ այն դեպքում, երբ ամբաստանյալի դատապարտումը բացառապես կամ հիմնականում հիմնված է այն վկաների տված ցուցմունքների վրա, որոնց մեղադրյալը չի կարող հարցաքննել վարույթի որեւէ փուլում, նրա պաշտպանության իրավունքներն անհիմն կերպով սահմանափակվում են.

vi) այս համատեքստում «որոշիչ» բառը պետք է ընկալվի նեղ իմաստով՝ որպես միայն այնպիսի նշանակության կամ կարեւորության ապացույց, որը կարող է որոշիչ լինել գործի ելքի համար: Եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հաստատված ապացույցներով, ապա դրա որոշիչ լինելու հանգամանքը գնահատելը կախված է հիմնավորող ապացույցների ապացուցողական ուժից. որքան ծանրակշիռ են մեղավորությունը հաստատող մյուս ապացույցները, այնքան ավելի քիչ հավանական է, որ քննությունից բացակայող վկայի ցուցմունքը համարվի որոշիչ.

vii) այնուամենայնիվ, քանի որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետը պետք է մեկնաբանվի վարույթի արդարացիության ընդհանուր ուսումնասիրության համատեքստում, միակ կամ որոշիչ կանոնը չպետք է կիրառվի ոչ ճկուն եղանակով.

viii) մասնավորապես, եթե ուրիշի խոսքի վրա հիմնված ցուցմունքն ամբաստանյալի դեմ ուղղված միակ կամ որոշիչ ապացույցն է, ապա այն որպես

ապացույց ճանաչելը մեխանիկորեն չի հանգեցնում 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման: Միեւնույն ժամանակ, եթե դատապարտման համար միակ կամ որոշիչ հիմք են հանդիսանում քննությունից բացակայող վկաների ցուցմունքները, ապա Դատարանը գործը պետք է առավել մանրազնին քննության ենթարկի: Այդպիսի ցուցմունքները որպես ապացույց ճանաչելուց բխող վտանգներից ելնելով՝ դա շատ կարեւոր գործոն է հավասարակշռությունն ապահովելու հարցում, եւ դրա համար անհրաժեշտ են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ ծանրակշիռ ընթացակարգային երաշխիքների առկայություն: Յուրաքանչյուր գործում հարցն այն է, թե արդյոք առկա են բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ այդ ապացույցների հավաստիության արդարացի եւ պատշաճ գնահատումը թույլատրող միջոցներ: Դա կարող է թույլ տալ դատապարտման հիմքում դնել այդպիսի ապացույցներ միայն այն դեպքում, երբ դրանք բավականաչափ հավաստի են՝ գործի համար դրանց կարեւորությունից ելնելով:

48. Այդ սկզբունքներն այնուհետեւ պարզաբանվել են *Շաչաշվիլիի* գործում (տե՛ս *Շաչաշվիլին ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ] [*Schatschaschwili v. Germany* [GC]], թիվ 9154/10, §§ 111 - 131, ՄԻԵԴ 2015), որում Մեծ պալատը հաստատել է, որ վկայի՝ քննությանը չներկայանալու համար հիմնավոր պատճառի բացակայությունը չի կարող ինքնին որոշիչ լինել դատաքննությունն անարդարացի համարելու հարցում՝ չնայած այն շատ կարեւոր գործոն է ընդհանուր արդարացիության գնահատման ժամանակ հավասարակշռության մեջ դիտարկելու համար եւ կարող է որոշիչ կերպով փոխել այդ հավասարակշռությունը 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում արձանագրելիս: Ավելին, հաշվի առնելով, որ Դատարանի խնդիրն էր պարզել՝ արդյոք դատաքննությունն ընդհանուր առմամբ արդարացի է եղել, թե՝ ոչ, այն պետք է ուսումնասիրեր ոչ միայն բավականաչափ հակակշռող գործոնների առկայությունն այն գործերում, որոնցում քննությունից բացակայող վկայի ցուցմունքը միակ կամ որոշիչ հիմքն է հանդիսացել դիմումատուի

դատապարտման համար, այլ նաեւ այն գործերում, որոնցում այն չի կարողացել հստակ պարզել՝ արդյոք խնդրո առարկա ցուցմունքը եղել է միակ եւ որոշիչ հիմքը, թե՝ ոչ, սակայն դրա հետ մեկտեղ համոզվել է, որ այն կարեւոր նշանակություն է ունեցել, եւ այն որպես ապացույց ճանաչելը կարող է նշանակալիորեն սահմանափակել պաշտպանության իրականացման հնարավորությունը: Հակակշռող գործոնների՝ դատաքննությունն արդար համարելու համար անհրաժեշտ շրջանակը կախված է քննությունից բացակայող վկայի ցուցմունքի նշանակությունից: Որքան կարեւոր նշանակություն ունենա այդ ցուցմունքը, այնքան ավելի կարեւոր նշանակություն պետք է ունենան հակակշռող գործոնները, որպեսզի դատաքննությունն ընդհանուր առմամբ համարվի արդարացի (տե՛ս *Սեթոնն ընդդեմ Միացյալ Թագավորության* [*Seton v. the United Kingdom*], թիվ 55287/10, § 59, 2016 թվականի մարտի 31):

բ) Այդ սկզբունքների կիրառումը սույն գործի նկատմամբ

i) Արդյոք վկաների՝ դատաքննությանը չներկայանալու համար առկա են հիմնավոր պատճառներ

49. Դատարանը նշում է, որ մարզային դատարանը եւ Վերաքննիչ դատարանը դիմումատուի գործը քննել են վկա Ք. Մ.-ի բացակայությամբ, որը հանդիսացել է սպանության միակ ականատես վկան, եւ որը նույն օրը ոստիկանության կողմից հարցաքննվելու ժամանակ տվել է դիմումատուի մեղավորությունն ուղղակիորեն հաստատող ցուցմունք (տե՛ս վերեւում՝ 9-րդ պարբերությունը): Մարզային դատարանը մի քանի անգամ հետաձգել է լսումները՝ փորձելով ապահովել Ք. Մ.-ի ներկայությունը դիմումատուի գործով դատաքննությանը, ինչպես նաեւ այդ հարցում դիմել է ոստիկանության աջակցությանը (տե՛ս վերեւում՝ 20-րդ, 21-րդ, 23-րդ եւ 24-րդ պարբերությունները): Վերաքննիչ դատարանն իր հերթին, փորձել է ապահովել Ք. Մ.-ի ներկայությունը

դատաքննությանը գործն իր վարույթում գտնվելու ժամանակ (տե՛ս վերեւում՝ 29-րդ պարբերությունը): Դատարանն այնուհետեւ նշում է, որ ոստիկանությանն անընդմեջ չի հաջողվել կատարել մարզային դատարանի կարգադրությունները՝ Ք. Մ.-ի կողմից դատաքննությանը հարկադրաբար ներկայանալու վերաբերյալ, սակայն, ըստ ոստիկանության, հնարավոր չի եղել պարզել նրա գտնվելու վայրը, եւ ենթադրվում է, որ նա մեկնել է երկրից (տե՛ս վերեւում՝ 22-րդ եւ 24-րդ պարբերությունները):

50. Այդ կապակցությամբ Դատարանը վերահաստատում է, որ ընդհանուր առմամբ ցուցաբերել է ողջամիտ մոտեցում՝ որոշելու համար՝ արդյոք ներպետական դատարանն ունեցել է հիմնավոր փաստական կամ իրավական հիմքեր՝ դատաքննությանը վկայի ներկայությունը չապահովելու համար: Այն գտել է, որ վկայի բացակայությունն այն երկրից, որտեղ անցկացվել է վարույթը, ինքնին բավարար հիմք չէ դատաքննությունից նրա բացակայության փաստը հիմնավորելու համար (տե՛ս *Սեթոնի* գործը՝ վերեւում հիշատակված, § 61): Մասնավորապես, վկայի գտնվելու վայրը հայտնի չլինելու դեպքում Դատարանը գտել է, որ իշխանությունները պետք է «ակտիվորեն փնտրեն վկային» եւ ձեռնարկեն «բոլոր ողջամիտ միջոցները վկայի ներկայությունն ապահովելու համար» (տե՛ս *Լուչիչն ընդդեմ Խորվաթիայի* [*Lučić v. Croatia*], թիվ 5699/11, § 79, 2014 թվականի փետրվարի 27):

51. Սույն գործում Դատարանի համար համոզիչ չէ այն հանգամանքը, որ գործադրվել են բոլոր ողջամիտ ջանքերը՝ դիմումատուի գործով դատաքննությանը վկա Ք. Մ.-ի ներկայությունն ապահովելու համար: Ճշմարիտ է այն հանգամանքը, որ ինչպես արդեն նշվել է, մարզային դատարանը փորձել է ապահովել Ք. Մ.-ի ներկայությունը դատավարությանը գործն իր վարույթում գտնվելու ժամանակ՝ մի քանի անգամ հետաձգելով լսումները եւ դիմելով ոստիկանության օգնությանը՝ դատաքննությանը նրա հարկադրաբար ներկայանալն ապահովելու համար: Այնուամենայնիվ, այդ միջոցները եղել են ապարդյուն՝ հաշվի առնելով դատարանի կարգադրությունը ոստիկանության

կողմից կատարելու անընդմեջ ձախողումը: Այն իրավիճակում, երբ ոստիկանությունը զուտ մի քանի անգամ այցելել է Ք. Մ.-ի տուն եւ տեղեկանալով, որ նա արտասահմանում է գտնվում, ո՛չ ստուգել է այդ տեղեկատվության հավաստիությունը եւ ո՛չ էլ փորձել է պարզել վերջինիս գտնվելու վայրը, ինչը հնարավորություն կտար դատարանին դիմելու միջազգային իրավական օգնության, Դատարանը չի կարող համարել, որ իշխանություններն «ակտիվորեն փնտրել են վկային» եւ ձեռնարկել «բոլոր ողջամիտ միջոցները՝ վկայի ներկայությունն ապահովելու համար»:

52. Այնուամենայնիվ, խնդիրը չի սահմանափակվում միայն Ք. Մ.-ի՝ դիմումատուի գործով դատաքննությանը չներկայանալու հիմնավոր պատճառի բացակայությամբ: Միայն այդ պնդումն ինքնին չի վկայում քրեական դատավարության անարդարացի լինելու մասին, թեեւ այն շատ կարեւոր գործոն է մյուս համապատասխան պնդումների հետ ընդհանուր հավասարակշռության մեջ դիտարկելու հարցում (տե՛ս *Շաչաշվիլիի* գործը՝ վերեւում հիշատակված, § 113):

ii) Արդյոք քննությունից բացակայող վկայի ցուցմունքը «միակը եւ որոշիչն» է եղել

53. Դատարանը պետք է ուսումնասիրի նաեւ այն հանգամանքը, թե արդյոք քննությունից բացակայող վկա Ք. Մ.-ի ցուցմունքը եղել է «միակ եւ որոշիչ» հիմքը՝ դիմումատուին դատապարտելու համար:

54. Դատարանը վերահաստատում է, որ «միակ» ապացույցը պետք է ընկալվի որպես մեղադրյալի դեմ ուղղված միակ ապացույց (տե՛ս *Ալ-Խավաջայի եւ Թահերիի* գործը՝ վերեւում հիշատակված, § 131): «Որոշիչ» ապացույցը պետք է մեկնաբանվի նեղ իմաստով՝ որպես այնպիսի նշանակության կամ կարեւորության ապացույց, որը կարող է որոշիչ լինել գործի ելքի համար: Եթե վկայի չստուգված ցուցմունքը հիմնավորվում է այլ հաստատված ապացույցներով, ապա դրա որոշիչ լինելու հանգամանքը գնահատելը կախված է լինում հիմնավորող ապացույցների

ապացուցողական ուժից. որքան ծանրակշիռ են հաստատող մյուս ապացույցները, այնքան ավելի քիչ հավանական է, որ քննությունից բացակայող վկայի ցուցմունքը համարվի որոշիչ (տե՛ս նույն տեղում, § 131):

55. Դատարանի դիտարկմամբ մարզային դատարանի եւ Վերաքննիչ դատարանի վճիռներում Ք. Մ.-ի մինչդատական ցուցմունքն ընդունվել է որպես դիմումատուի մեղավորությունը հաստատող ապացույց՝ առանց գնահատելու այդ ապացույցի ապացուցողական արժեքը: Հետեւաբար, Դատարանը պետք է սեփական գնահատականը տա քննությունից բացակայող վկայի ցուցմունքի ծանրակշիռ լինելու հանգամանքին՝ հաշվի առնելով մեղավորությունը հաստատող մյուս առկա ապացույցները (տե՛ս *Շաչաշվիլիի* գործը՝ վերեւում հիշատակված, § 143, *Պոլետանը եւ Ազիրովիկն ընդդեմ Մակեդոնիայի նախկին Հարավսլավական Հանրապետության* [*Poletan and Azirovik v. the former Yugoslav Republic of Macedonia*], թիվ 26711/07, թիվ 32786/10 եւ թիվ 34278/10, § 88, 2016 թվականի մայիսի 12):

56. Ինչպես արդեն նշվել է, Ք. Մ.-ն եղել է հանցագործության միակ ականատես վկան: Նա ճանաչել է դիմումատուին, ով եղել է իր հարեւանը, եւ մատնացույց է արել նրան ոստիկանության կողմից հարցաքննության ժամանակ (տե՛ս վերեւում՝ 9-րդ պարբերությունը): Կասկածի տակ չի կարող դրվել այն հանգամանքը, որ Ք. Մ.-ի ցուցմունքը միակ ապացույցը չէ, որի վրա հիմնվել է դիմումատուի դատապարտումը: Այնուամենայնիվ, վկայի մինչդատական ցուցմունքը միակ ուղղակի ապացույցն է, որը հիմնավորում է այն հայտարարությունը, որ դիմումատուն է կրակ արձակել Կ. Ս.-ի ավտոմեքենայի վրա: Այդ իմաստով դիմումատուի գործում Ք. Մ.-ն կարող է դիտարկվել որպես մեղադրող կողմի հիմնական վկա: Ինչ վերաբերում է ապացույցների մնացած մասին, Ս. Ս.-ի ցուցմունքը զուտ ապացուցում է, որ Կ. Ս.-ի եւ դիմումատուի միջեւ առկա են եղել լարված հարաբերություններ, մինչդեռ Ք. Մ.-ի ծնողների՝ Ա. Մ.-ի եւ Ս. Մ.-ի ցուցմունքները հիմնված են եղել դեպքերի մասին Ք. Մ.-ի տված ցուցմունքների վրա (տե՛ս վերեւում՝ 12-րդ եւ 11-րդ պարբերությունները): Ճշմարիտ է

այն հանգամանքը, որ Վ. Ջ.-ի ցուցմունքը, որը նա վերահաստատել է առերես հարցաքննության ժամանակ, հակասում է դիմումատուի պաշտպանական ցուցմունքին այն մասին, որ հանցագործության կատարման ժամանակ նա եղել է Վ. Ջ.-ի տանը (տե՛ս վերեւում՝ 15-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, միայն Վ. Ջ.-ի ցուցմունքն առանձին չի ապացուցում, որ ավտոմեքենայի վրա կրակ արձակողը եղել է դիմումատուն եւ ոչ թե նրա եղբայրը, ինչպես նշել էր դիմումատուն իր խոստովանական ցուցմունքից հրաժարվելուց հետո: Կառավարությունը չի կարողացել հիմնավորել, որ մնացած բոլոր ապացույցները, այդ թվում՝ դատաբժշկական փորձաքննությունը բավարար են որոշիչ կերպով պնդելու համար, որ հանցագործությունը կատարվել է դիմումատուի եւ ոչ թե մեկ այլ անձի, օրինակ՝ նրա եղբոր կողմից: Օրինակ, ներպետական դատարանների վճիռներից չի բխում, որ դեպքի օրը դիմումատուի հագին եղած հագուստի վրա կրակոցի՝ դատաբժշկական փորձաքննությամբ հաստատված հետքերն ապացուցում են, որ կրակոցների հեղինակը եղել է նա: Վերոնշյալից ելնելով՝ Դատարանը գտնում է, որ դիմումատուի դատապարտման համար որոշիչ են եղել քննությունից բացակայող վկա Ք. Մ.-ի ցուցմունքները:

iii) Արդյոք առկա են եղել բավարար «հակակշռող գործոններ»

57. Ի վերջո, Դատարանը պետք է որոշի՝ արդյոք առկա են եղել բավարար հակակշռող գործոններ, այդ թվում՝ միջոցներ, որոնք թույլ են տվել արդարացի եւ պատշաճ կերպով գնահատել քննությունից բացակայող վկաների տված ցուցմունքների հավաստիությունը: Այս համատեքստում վերաբերելի են հետեւյալ տարրերը. դատաքննություն իրականացնող դատարանի մոտեցումը չստուգված ապացույցներին, մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույցների առկայությունը եւ դրանց ապացուցողական ուժը, ինչպես նաեւ դատաքննության ժամանակ վկաներին խաչաձեւ հարցաքննելու հնարավորության բացակայությունը հատուցելու համար ձեռնարկված դատավարական միջոցները (տե՛ս *Շաչաշվիլիի* գործը՝ վերեւում հիշատակված, §§ 125-131):

58. Դատարանը նշում է, որ մարզային դատարանի վճիռը չի պարունակում իրեն ներկայացված ապացույցների վերլուծություն, ինչպես նաեւ ավելի փոքր նշում այն մասին, որ դատարանը տեղյակ է եղել վկայի չստուգված ցուցմունքների, այդ թվում՝ Ք. Մ.-ի ցուցմունքի նվազ ապացուցողական արժեքի մասին: Բոլոր ապացույցները պարզապես ներկայացվել են որպես դիմումատուի կողմից հանցագործության կատարման ապացույց՝ առանց վկայի չստուգված ցուցմունքի հավաստիության գնահատման (տե՛ս վերեւում՝ 26-րդ պարբերությունը): Հետեւաբար, Դատարանը գտնում է, որ դատաքննություն անցկացնող դատարանը պատշաճ կարգով չի քննել Ք. Մ.-ի ցուցմունքի հավաստիության հարցը:

59. Դատարանն այնուհետեւ նշում է, որ, ինչպես արդեն վերեւում նշվել է, մարզային դատարանն ունեցել է դիմումատուի մեղավորությունը հաստատող լրացուցիչ ապացույց (տե՛ս վերեւում՝ 56-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, ինչպես արդեն նշվել է, լրացուցիչ ապացույցը, ի տարբերություն Ք. Մ.-ի ցուցմունքի, ինքնին չի խաթարել դիմումատուի պաշտպանության իրականացումն այն մասով, որ իր մահացած եղբայրն է կատարել սպանությունը:

60 Ի վերջո, Դատարանը նշում է, որ դատավարական որեւէ միջոց չի ձեռնարկվել՝ իր գործով դատաքննության ժամանակ Ք. Մ.-ին խաչաձեւ հարցաքննելու հնարավորության բացակայությունը հատուցելու համար: Դիմումատուն հնարավորություն չի ունեցել հարցաքննելու Ք. Մ.-ին վարույթի որեւէ փուլում: Ավելին, դիմումատուն Վերաքննիչ դատարանից պահանջել է Ք. Մ.-ի ցուցմունքը հայտարարել անընդունելի, սակայն իր պահանջը որեւէ կերպ չի բավարարվել (տե՛ս վերեւում՝ 30-րդ եւ 31-րդ պարբերությունները):

61. Վերոնշյալ պնդումները բավարար են, որպեսզի Դատարանը եզրակացնի, որ անհիմն կերպով սահմանափակվել է դիմումատուի՝ վկա Ք. Մ.-ին հարցաքննելու իրավունքը, ում վկայությունները որոշիչ դեր են ունեցել իր դատապարտման հարցում:

62. Հետեւաբար, տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի եւ 3-րդ կետի «դ» ենթակետի խախտում:

II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

63. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

> «Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել:»:

Ա. Վնասը

64. Դիմումատուն պահանջել է 5 000 եվրո՝ որպես նյութական վնասի հատուցում, այդ թվում՝ բաց թողնված օգուտը եւ իր ընտանիքի՝ իրեն քրեակատարողական հիմնարկում այցելելու հետ կապված ծախսերը: Նա լրացուցիչ պահանջել է 15 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

65. Կառավարությունը գտել է, որ առկա չէ որեւէ պատճառահետեւանքային կապ դիմումատուի կրած նյութական եւ ոչ նյութական վնասների եւ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ենթադրյալ խախտման միջեւ:

66. Դատարանը որեւէ պատճառահետեւանքային կապ չի տեսնում հայտնաբերված խախտման եւ ենթադրյալ նյութական վնասի միջեւ, հետեւաբար այն մերժում է այդ պահանջը: Դատարանը, կատարելով իր գնահատումն արդարության սկզբունքի հիման վրա եւ հաշվի առնելով գործի հանգամանքները, դիմումատուին շնորհում է 2 400 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

67. Ի հավելումն, Դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ այն վճիռը, որում այն Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում է

արձանագրում, պատասխանող Պետության վրա իրավական պարտավորություն է դնում ոչ միայն շահագրգիռ անձանց անհրաժեշտության դեպքում վճարել այն գումարները, որոնք վճռել է տրամադրել որպես արդարացի փոխհատուցում, այլ նաեւ Նախարարների կոմիտեի վերահսկողությամբ ընտրել, թե հարկ եղած դեպքում ինչպիսի ընդհանուր եւ (կամ) մասնավոր միջոցներ պետք է ընդունվեն ներպետական իրավական համակարգում՝ Դատարանի կողմից արձանագրված խախտումն արմատապես վերացնելու եւ դրա հետեւանքները հարթելուն ուղղված հնարավոր այնպիսի հատուցում տրամադրելու համար, որը հնարավորինս կվերականգնի նախքան խախտումն առկա իրավիճակը (տե՛ս *Սկոցարին եւ Գյունտան ընդդեմ Իտալիայի* [*Scozzari and Giunta v. Italy*] [ՄՊ], թիվ 39221/98 եւ թիվ 41963/98, § 249, ՄԻԵԴ 2000-VIII, *Իլաշկուն եւ այլք ընդդեմ Մոլդովայի եւ Ռուսաստանի* [ՄՊ] [*Ilaşcu and Others v. Moldova and Russia* [GC]], թիվ 48787/99, § 487, ՄԻԵԴ 2004-VII, եւ *Լունգոչին ընդդեմ Ռումինիայի* [*Lungoci v. Romania*], թիվ 62710/00, § 55, 2006 թվականի հունվարի 26): Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում արձանագրելու դեպքում դիմումատուի համար հնարավորինս պետք է ստեղծվի այնպիսի իրավիճակ, որում նա կգտնվեր, եթե այդ դրույթի պահանջներն անտեսված չլինեին (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով), *Սեյդովիչն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Sejdovic v. Italy* [GC]], թիվ 56581/00, § 127, ՄԻԵԴ 2006-II, եւ *Յանակիեւն ընդդեմ Բուլղարիայի* [*Yanakiev v. Bulgaria*], թիվ 40476/98, § 89, 2006 թվականի օգոստոսի 10):

68. Դատարանն այս առնչությամբ նշում է, որ ՔԴՕ-ի 426.1 եւ 426.4 հոդվածները թույլ են տալիս ներպետական վարույթի վերաբացում, եթե Դատարանը հայտնաբերի Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում (տե՛ս վերեւում՝ 38-րդ եւ 39-րդ պարբերությունները): Ինչպես Դատարանը նախկինում նշել է իր նախադեպերում, այնպիսի գործերում, ինչպես օրինակ սույն գործն է, փոխհատուցման ամենապատշաճ ձեւը, որպես կանոն, վարույթի պատշաճ կարգով վերաբացումն է եւ գործի վերաքննությունը՝ արդար դատաքննության բոլոր պահանջներին համապատասխան (տե՛ս *Գաբրիելյանն*

ընդդեմ Հայաստանի [*Gabrielyan v. Armenia*], թիվ 8088/05, § 104, 2012 թվականի ապրիլի 10):

Բ. Ծախսերը եւ ծախքերը

69. Դիմումատուն նաեւ պահանջել է 2 000 եվրո՝ որպես դատական ծախսերի փոխհատուցում:

70. Կառավարությունը պահանջել է, որ այդ մասով պահանջը մերժվի:

71. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի փոխհատուցման իրավունք միայն այնքանով, որքանով ցույց է տրվում, որ նա դրանք կրել է իրականում եւ ըստ անհրաժեշտության, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ: Դատարանը նշում է, որ դիմումատուն չի կարողացել ներկայացնել որեւէ փաստաթղթային ապացույց՝ իր կողմից ներկայացված ծախսերի եւ ծախքերի վերաբերյալ պահանջները հիմնավորելու համար: Հետեւաբար Դատարանը մերժում է այդ մասով ներկայացված պահանջները:

Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

72. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. *Հայտարարում է* գանգատն ընդունելի.

2. *Վճռում է,* որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ 6-րդ հոդվածի 3-րդ կետի «դ» ենթակետի հետ միասին վերցրած.

3. *Վճռում է, որ*

ա) պատասխանող Պետությունը, Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վճիռը վերջնական դառնալու օրվանից՝ երեք ամսվա ընթացքում, պետք է դիմումատուին վճարի 2 400 եվրո (երկու հազար չորս հարյուր եվրո), որը պետք է փոխարկվի պատասխանող Պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչեւ վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարի նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

4. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2016 թվականի նոյեմբերի 24-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Աբել Կամպոս՝
Քարտուղար

Միրյանա Լազարովա Տրայկովսկա՝
Նախագահ